Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 215 - Ա
որոշման

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Թումո լաբորատորիաներ հաճախող ուսանողներին, շրջանավարտներին և բազային կրթություն ունեցող ուսանողներին զարգացնելու հմտությունները և ամրապնդելու իրենց գիտելիքները կիբեր-անվտանգության ոլորտում՝ խրախուսելով նրանց մասնակցությունը կրթական ծրագրին: Այն նախա-տեսում է ամրապնդել Հայաստանում կիբերանվտանգության կրթությունը՝ Թումոյի լաբորատորիաներում անվճար ինքնուսուցման մոդուլների ներդրման միջոցով, մեկամյա արագացված կիբերանվտանգության դասընթացի միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (Դագ- Համմարսկյորլդ-Վեգ 1-5 65760 Էխբորն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն). 2) Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, ՀՎՀՀ՝ 02861356):
4.	Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	156,972,186 դրամ 72,760,398 դրամ նախատեսվում է ստանալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունից 84,211,788 դրամ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն հիմնադրամից

7.	Բարեգործություն ստացողը	Թումո լաբորատորիաների բոլոր ուսանողները, շրջանավարտները, ինչպես նաև բազային կրթություն ունեցող ուսանողները, ովքեր հետաքրքրված են կիբերանվտանգության ոլորտով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 28-ից մինչև 2026 թվականի հունիսի 26-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) կիբերանվտանգության ոլորտում գիտելիքների ամրապնդման և հմտությունների զարգացման դասընթացների կազմակերպում՝ 135,859,970 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 28-ից մինչև 2026 թվականի հունիսի 26-ն ընկած ժամանակահատվածում. 2) դասընթացների անցկացման համար անհրաժեշտ նյութերի, գովազդային արշավների, միջոցառումների, մրցանակների ապահովում՝ 21,112,216 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 28-ից մինչև 2026 թվականի հունիսի 26-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) պայմանագրային աշխատողների ծառայությունների մատուցման ձեռքբերում՝ 27,914,063 դրամ. 2) գրենական, գործավարական, տնտեսական նյութերի և պարագաների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 6,353,632 դրամ. 3) գովազդային արշավների ձեռքբերում օտարերկրյա պետություններից՝ 616,635 դրամ. 4) մարքեթինգային և տեսանկարահանման ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 1,198,327 դրամ. 5) հյուրասիրության ծառայության ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 1,644,360 դրամ. 6) կոմունալ ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 11,299,262 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Կազմակերպական ծախսեր՝ 21,112,216 դրամ՝ 1) գրենական, գործավարական, տնտեսական նյութերի և պարագաների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 6,353,632 դրամ. 2) գովազդային արշավների ձեռքբերում օտարերկրյա պետություններից՝ 616,635 դրամ.

		3) մարքեթինգային և տեսանկարահանման ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 1,198,327 դրամ. 4) հյուրասիրության ծառայության ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 1,644,360 դրամ. 5) կոմունալ ծառայությունների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 11,99,262 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր և միջազգային կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ